



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, էլ.փոստ kotayk@mta.gov.am

30.08.2013 N _____

Շ Ն Ո Ր Հ Ա Վ Ո Ր Ա Կ Ա Ն ՈՒ Ղ Ե Ր Ձ
ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԵԿԵԱՐԿԻ,
ԳԻՏԵԼԻՔԻ ԵՎ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Ջերմորեն շնորհավորում եմ Գիտելիքի և դպրության օրվա առթիվ և մաղթում, որ նոր ուսումնական տարին մեկնարկի դրական միտումներով ու ընթանա առողջ մտքի, հաջողությունների և ձեռքբերումների գերակայություններով:

Այսօր կարևորագույն ու նշանակալի տոն է բոլորի համար, հատկապես այն փոքրիկների, ովքեր առաջին անգամ կ'ստան դպրոցական նստարաններին: Տոն է այն բոլոր դպրոցականների, նրանց ծնողների և ուսուցիչների հոգում, ովքեր մեծագույն սպասումով են դիմավորում նոր ուսումնականը՝ նոր ծրագրերի կիրառման, նոր գիտելիքների ձեռքբերման հստակ նպատակադրմամբ:


Բոլորիս է հայտնի, որ պետական կրթական քաղաքականության հիմքում դրված է աշակերտներին լավագույն և մրցունակ գիտելիքներով ապահովելու, ինչպես նաև նրանց հայրենասիրական ոգին բարձր պահելու հրամայականը: Ահա և այդ շեշտադրումներն էլ լինելու են այս ուսումնական տարվա հիմնական կարգախոսներն ու կրթօջախների գործունեության հիմնական առանցքը:

Յուրաքանչյուր հզոր պետության շարժիչ ուժը կրթված հասարակության գոյությունն է, ուստի ցանկանում եմ, որ մեր դպրոցներն այդ իրողությունը դարձնեն իրենց գերակա սկզբունքը՝ մատուցելով համապատասխան գիտելիքներ և հմտություններ:

Այս տոնական օրվա կապակցությամբ կրկին անգամ շնորհավորում եմ մեր մանկավարժներին, աշակերտներին, ինչպես նաև առաջին զանգի դողանջների ներքո իրենց երեխաներին կյանքի նոր փուլ ուղեկցող ծնողներին:

Ամենայն բարիք Ձեզ:

Հարգանքներով


Վ. ՇԱՀՎԱՆԴՅԱՆ